Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՃՏ 2022. «Լոռու մարզում անտառվերականգնման ջերմոցային և հակակարկտային ցանցի ստեղծման» ծրագրի ստորագրման արարողություն

2022թ. դեկտեմբերի 15-ին ՀՀ Շրջակա միջավայրի նախարարությունում տեղի ունեցավ 89,870 ԱՄՆ դոլար արժողությամբ «Լոռու մարզում անտառվերականգնման ջերմոցային և հակակարկտային ցանցի ստեղծման» ծրագրի դրամաշնորհային պայմանագրի ստորագրման արարողությունը՝ Ճապոնիայի կառավարության Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության շրջանակում: Դրամաշնորհային պայմանագիրը ստորագրվեց ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան պարոն Մասանորի Ֆուկուշիմայի և «Իմ անտառ Հայաստան» ՀԿ-ի հիմնադիր և գործադիր տնօրեն Անդրե Գումուշճեանի միջև: Արարողությանը ներկա էր նաև Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ, տիկին Գայանե Գաբրիելյանը:

Ծրագրի նպատակն է բարելավել անտառվերականգնման համար նախատեսված տնկիների որակը և քանակը՝ տարածաշրջանում աղետները կանխարգելելու նպատակով՝ ջերմոց հիմնելու, ինչպես նաև ջերմոցին հարող տնկարանում հակակարկտային ցանցի տեղադրման միջոցով: Արդյունքում Լոռու մարզի շուրջ 212,000 բնակիչ կշահի ծրագրից:

Դեսպան Ֆուկուշիմայի ելույթը

Պարոն Գումուշճեանի ելույթը

Դրամաշնորհային պայմանագրի ստորագրումը դեսպան Ֆուկուշիմայի և պարոն Գումուշճեանի միջև

Դեսպան Ֆուկուշիման (ձախից), տիկին Գաբրիելյանը (մեջտեղում) and պարոն Գումուշճեանը (աջից)